պետ, իշխան„ բառը, որուն արմատը išḫ-է išḫiavar "կապել, սանձել, տիրել, իշխել„ բայէն շինուած է, ինչպէս išḫiul "սանձող, կապող, օրէնք„, հայ. իշխել (իշխան) բառին կը համապատասխանէ։

Հեթ. tak-šul "ուրիշ՝ մեծի տակ եղող, հպատակ, ենթարկեալ„ բառին tak- արմատը հայ. տակ բառին հետ նոյն կը թուի։ Tak-šul, tak-šulait "հպատակեցնել, նուաճել, տակ ձգել„ բային ածանցումն է։ Այս բային եզ. անկատ. բ. գէմքն է tak-šulaeš "(կը) նուաճէիր, հպատակեցնէիր„։ Tak- արմատը բարդուած է դեռ ուրիշ բայերու հետ օր. համար tak-šeššar կարգի տակ դնել, տակ-տակի դնել„։

Հեթ. up, upp "ափ, փոռ, ափաչափ„ բառը, որուն հեթիդ. բնագիրներուն մէջ ստէպ կը հանդիպինք, հայ. ափ (ափամէջ) բառին հետ նոյն է։ Prof. Hrozný կ'ըսէր որ հեթ. up կամ upp չափի մը անուն է եւ hrst "ափ, ափամէջ„ կը նշանակէ։ Prof. Friedrich հեթ. up "Handvoll, hohle Hand„ կը թարգմանէ, որ չէս. hrst "ափ„ բառին իմաստն ունի։

Պրագ։

Ն. Ա. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ՆՈՐ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ՔՐԻՍՏՈՓՈՐ ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱ

(ՆՐԱ ԿԵԱՆՔԸ ԵՒ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ)

—

I.

Երաժիշտը։

Մեզանից 22 տարի առաջ, 1902 թուի մարտ 27-ին, կարճատեւ եւ անակնկալ հիւանդութիւնից յետոյ գերեզման իջաւ երաժիշտ Խաչատուր Կարա-Մուրզան։ Եւ այս երկու տասնեակ տարիների ընթացքում նա չէ մոռացուել, նա ապրում է, չնայած այն հանգամանքին որ հանգուցեալը երաժշտական խոշոր եւ մնայուն աշխատութիւններ չունի թողած։

Հանճարեղ արուեստագէտները ապրում են իրենց ստեղծագործութիւններով, ստեղծագործութիւններ, որոնց սահմաններ չեն ճանաչում եւ որոնք պատկանում են ամբողջ մարդկութեան։

Բեթհովէն, Բախ, Ռուբէնս, Ռոդէն, Ռաֆաէլ, Միքէլ-Անջէլօ համաշխարհային հանճարներ են. նման արուեստագէտներ մենք չենք ունեցել։ Սակաւաթիւ հայ արուեստագէտները մնացել են կղզեացած մեր խաւար միջավայրում եւ նոյն իսկ քաջալերանք չեն գտել։ Աւելին անգամ։ Ո՛չ թէ միայն քաջալերանքի չի արժանացել հայ արուեստագէտը, ապա նա նոյն իսկ հալածուել է։ Կարա-Մուրզայի պարագան աղաղակող փաստ է այս տեսակէտից։

Գուցէ ոմանք առարկեն որ լուսաւոր Եւրոպայում անգամ հանճարեղ վագնէրը դժուարութիւնների հանդիպեց։ Սակայն այստեղ մի փոքրիկ թիւրիմացութիւն կայ։ Երաժշտական աշխարհը քննադատութեան ենթարկեց մի միայն Վագնէրի նոր արուեստը, որովհետեւ նա ծրագրային երաժշտութիւն (Programm-Musik) էր մտցնում եւ նրա օպերաները բարդ գործողութիւններու ապրումներ պարունակող պոէմներ էին, իսկ մեզանում ոչ թէ միայն քառաձայնը խութերի հանդիպեց, ապա միաժամանակ երաժիշտ անձնաւորութիւնը հալածուեց։

Այո, Կարա-Մուրզան հալածուեց հայ "լուսաւոր„ մտաւորականութիւնից, որովհետեւ տարաբախտ երաժիշտը կաթոլիկ էր, նա հալածուեց եւ հեռացուեց Էջմիածնի յետադէմ հոգեւորականութեան կողմից, որովհետեւ Ֆանատիկոս Կարա-Մուրզան քառաձայն երգեցողութիւն էր տարածում։ Եւ այսքան միայն։ Բայց այս մասին յետոյ, երբ կը ծանօթանանք նրա կեանքին հանգամանօրէն։

Հայ ժողովուրդը ապրելով քաղաքական ծանր պայմանների մէջ, բռնակալ կարգերի ներքոյ, չէր կարող անշուշտ մտածել ոչ գրականութեան եւ ոչ էլ գեղարուեստի մասին։ Մասնաւորապէս հայ երաժշտութիւնը օրիցօր կորսնցնում էր իր ինքնուրոյնութիւնը եւ դառնում խառնուրդ պարս-

digitised by

կական եւ թրքական եղանակների։ Այս աղաւաղումը կատարուում էր ժամանակի ընթացքին, աստիճանաբար, այնպէս որ չէր կարող ցնցող տպաւորութիւն թողուլ հասարակութեան վրայ։ Թէ հոգեւոր եւ թէ աշխարհիկ երգերը բախտին էին յանձնուած, եւ չկար մէկը որ լուրջ գիտական պատրաստութիւն ունենար այդ ուղղութեամբ աշխատանք կատարելու։

"Յայտնի է որ հայկական հոգեւոր երաժշտութեան սկիզբը վերագրում են V-րդ դարին, երբ սկսեցին զարգանալ շարականները, որոնք ժամանակի ընթացքում երգուում էին եկեղեցիներում ութ ձայնի եղանակներով։ Եղանակների համար գոյութիւն ունէին առաջին նշաններ, որոնք, ինչպէս մինչեւ այժմ կարծուում է, չէին որոշում իսկութեամբ, եւ ճիշտ ձայնի բարձրութիւնը եւ տեւողութիւնը, այլ սոսկ մոտաւոր հաշուով ցոյց էին տալիս ձայնի շարժողութիւնը, մի քանի մոտուլեցիաներ (մի տոնից միւսին անցնելը) եւ ձայնի բարձրութիւնը որոշող ժամանակը։ Ապա արդէն մուտք գործեցին խաղերը, որոնց բազմատեսակութիւնը ինքնին շատ էր դժուարութիւն պատճառում, որով երաժշտութիւնը սկսեց կրկին բերնէ բերան, անգիր աւանդուիլ։ Վանական հոգեւորականութեան մոտ ուսանելու եկած եկեղեցական սպասաւորները վերադառնալով ամեն մինը իր տեղը, սկսում էր իր տեսակի, իր քմքի համաձայն, յաճախ աշխարհիկ երգերի ազդեցութեան տակ սաւորեցնել ուսածը։

Միւս կողմից եթէ նկատի առնենք տիրապետող մահմեդական ցեղերի զանազան ժամանակ հայերին հասցրած նեղութիւնները եւ ճնշումները, հասկանալի կը լինի այն անխուսափելի իրողութիւնը, որ այդ եղանակները, չէին կարող անվթար ու անփոփոխ մնալ, այլ պէտք է կերպարանափոխուէին, անգամ հասնելով խայտաբղեղութեան։ Յետագայում եւս վերոյիշեալ պատճառներով շատ հին շարականներ մոռացութեան մատնուեցին, իսկ երբեմն զանազան երաժշտասէրներ յօրինում էին նորերը[1]։"

Ճիշտ է որ Հայոց Կաթողիկոս Գէորգ Դ. Դը մեծ ջանք էր թափում եւ այդ նպատակով Պոլսի, Էջմիածին կանչել տուեց Սիկողայոս Թաշճեանին, բայց պիտի ասել որ նրանք առանձին արդիւնքի չհասան։ "Սիկողայոս Թաշճեանն եւ նա՝ մի քանի տեղական հմուտ եկեղեցական երգիչներու խորհրդակցութեամբ բոլորովին փոխեց հին խաղերն եւ հիմնական 8 ձայները պահելով՝ զանոնք յարմարցուց նոր պա անջուններուն եւ եւրոպական նոտերու ձեւով կազմեց բոլորովին նոր ձայնագրութիւն։ Ամբողջապէս բոլոր շարականներն, տաղերը, գանձերն եւ այլ հոգեւոր երգերու տեսակները ձայնագրուեցաւ նոր սիստէմով, որ այնուհետեւ պարտաւորիչ դարձաւ Ռուսահայոց եկեղեցիներու մէջ։ Մի առ ժամանակ ամեն մարդ գոհ մնաց այն՝ համեմատաբար կանոնաւորուած երգեցողութեամբ։ Սակայն եկաւ ժամանակ, երբ այս նոր ձայնագրութիւնն ալ ունեցաւ իր դժգոհներու խումբը, գլխաւորապէս հայ երաժիշտներու եւ գեղարուեստասէրներու դասէն, որոնք կը գտնէին թէ Թաշճեանի ձայնագրութիւնը՝ ժամանակակից երաժշտական (կ'ենթադրուի եւրոպական) գիտութեան տեսակէտով ունէր մի հիմնական պակասութիւն. այն է՝ նա հիմնուած էր միաձայն այսինքն մի ձայնով երգելու սկզբունքի վրայ։ Ուստի այս ու այն հայ երաժշտի կողմէն փորձեր եղան ներդաշնակութիւն մացնել եկեղեցական երգեցողութեան եւ գլխաւորաբար պատարագի մէջ, միաձայն երգեցողութիւնը վերածելով խմբական քառաձայնի[2]։"

Վերեւում ասացի որ այդ ժամանակաշրջանին հայ երաժշտութիւնը գտնուում էր

[1] Ս. Եսայեան, "Մ. Եկմալեան", Գեղարուեստ, 1909 թ., էջ 44—48։

[2] Տիւրեան, "Ժողովրդական երգեցողութիւնը Ռուսահայոց մէջ", Հանդէս Ամսօրեայ, 1905, էջ 137—138։

A.R.A.R.@

ողբալի կացութեան մէջ։ Աններդաշնակ ձայներից թմրում էր լսողի միտքը, իսկ շատ թէ քիչ ճաշակ ունեցողը չէր ցանկանում լսել ոչ աշխարհիկ եւ ոչ էլ հոգեւոր երգերը։

Մինչեւ Կարա-Մուրզան, հայ ժողովուրդը ծանօթ չէ եղել քառաձայն երգեցողութեան։ Առաջին անգամ մեր մէջ քառաձայն երգեցողութիւն տարածողը Կարա-Մուրզան եղաւ եւ դրա համար նա շատ դժուարութիւնների հանդիպեց։ Նրա յաջորդները հմարեայ խոչընդոտների չհանդիպեցին այս ասպարիզում. Կարա-Մուրզային վիճակուեց այդ ծանր եւ դժուարին պարտականութիւնը, սակայն նա անտարուն չ տարեց իրեն վիճակուած պատմական բեռը եւ յաղթանակով դուրս եկաւ։

"Ինչպէս եկեղեցական տաղերն, այնպէս ալ ժողովրդական երգերը կ'երգուէին միաձայն, այսինքն՝ մի ձայնով։ Առաջին անգամ Կարա-Մուրզան եղաւ, որ ձեռնարկեց այս երգերն ժողովելու եւ մշակելու ծանր գործին։ Հայ գործիչներու շարքին մէջ շատ քիչ մարդ կը գտնուի, որ իր սիրած գաղափարն իրականացնելու համար այսքան տոկունութիւն եւ յարատեւութիւն ցոյց տուած լինի։ Կարա-Մուրզան ամբողջ Կովկասն եւ Ղրիմը պտտելով հաւաքեց ցիրուցան եւ նոյն իսկ խուլ անկիւններն երգուած հայերէն երգերն, մշակեց, ներդաշնակեց, քառաձայնի վերածեց եւ ամէն տեղ տեղական ոյժերը վարժեցնելով եւ անոնցմէ ժողովրդական երգեցիկ խմբեր կազմելով հայ ժողովրդական եւ հայրենասիրական երգն առաջին անգամ բեմ հանեց[1]։"

Նա ահա այստեղ է Կարա-Մուրզայի ամենամեծ արժէքը։ Այստեղ է նրա երաժշտական խոշորութիւնը։ Շրջել քաղաքից քաղաք, գիւղից գիւղ եւ երգեցիկ խմբեր կազմել հեշտ գործ չէր այդ մռայլ ժամանակաշրջանում։ Կարա-Մուրզայի յարատեւողին եւ եռանդը անհրաժեշտ էր։ Ցաւառ էր նա եւ իր յաջողութեանը մասին երբեք չէր կասկածում։ Ճիշտ է որ չունենալով երաժշտական խոր պատրաստութիւն նա չկարողացաւ հայկական երաժշտութիւնը զտել օտար եւ աւելորդ տարրերից, բայց Կարա-Մուրզան որպէս հայ ժողովրդական երգի պրոպականտիստ եղակի եղաւ։

"Նա գիտէր ամէն ինչ արհամարհել, ամէն հալածանք եւ զրկանք կրել, բայց գործից չպաղել, գործին նուիրուել մի առանձին արտասովոր ոգեւորութեամբ, ամբողջ էութեամբ։ Նա քանի երկար տարիներ գտնուել է ամենաանպաստ, ամէն ինչ մեռցնող, յուսահատեցնող հանգամանքների մէջ, բայց երբեք չէ ընկճուել, չէ խոնարհուել, մարտնչել է արիաբար, համոզմունքով եւ միշտ գլուխ բերել իր փայփայած գործը — մայրենի հայ ժողովրդական երգի տարածելու խորհրդաւոր գործը։ Եւ մինչդեռ հայ բուրժուան բաց ի հարստանալու տենչը ուրիշ ոչ մի հոգս չունի եւ ժամանակակից իդէալներից զուրկ հայ ուսանողութիւնը համալսարան վերջացնելուց յետոյ անմիջապէս վաղում գալիս է Թիֆլիս կամ Բագու՝ անարդ հաշուի վրայ մտածելով միայն, Կարա-Մուրզան՝ որպէս մի առաքեալ՝ շատ անգամ քաղցած, շատ անգամ ծարաւ, շատ անգամ մերկ թափառում էր Կովկասի զանազան մասերում եւ հայի կոշտացած ականջներին լսելի դարձնում մայրենի երգը, նրա խոր թախիծը, մորմոքիչ վիշտն ու ցաւը, եւ ստիպում առժամ դուրս գալ անասնական կեանքից եւ մտածել ընդհանուրի շահերի մասին[1]։"

Կարա-Մուրզայի արժէքը չի կայանում այնտեղ որ նա հայ ժողովրդական եւ հոգեւոր երգերը գրի առաւ եւ դաշնաւորեց. նրա մեծութիւնը պիտի որոնել այն հանգամանքի մէջ, որ նա այդ երգերի ռահվիրան եւ պրոպականտիստը եղաւ միաժամանակ։

---

[1] Տես նոյն ամսագիրը, էջ 189։

[1] Արշակ Յարութիւնեան, "Կարա-Մուրզա" Թատրոն, 1903 թ., էջ 110—113, Թիֆլիս։

digitised by

II.

Նրա կեանքը:

Կարա-Մուրզան ծնուել է 1854 թուի յունվար 15-ին Խրիմի Ղարա-Սու-Բազար քաղաքում: Նրա հայրը ունեւոր դասից չէր եւ դրա համար չկարողացաւ իր զաւակը դպրոց ուղարկել: Հայրը գեղարուեստասէր մարդ էր, որի տան դռները բաց էին երգիչների եւ դերասանների առջեւ: Նրա ծննդավայր քաղաքում ապրում էին Մխիթարեան վարդապետներ, որոնց դպրոցում յաճախ խաղում էին պատմական կտորներ: Մանուկ Քրիստաֆորը ներկայ էր գտնուում այդ ներկայացումներին: Դեռ վաղ ժամանակից նա մեծ սէր էր տածում դէպի արուեստը ընդհանրապէս եւ երաժշտութիւնը մասնաւորապէս: Մխիթարեանների բնակութիւնը իր հայրենիքում մեծապէս նպաստում է ապագայ երաժշտի վրայ. նա միշտ եկեղեցի էր այցելում եւ լսում հոգեւոր երգեր:

Այդ ժամանակ Ղարա-Սու-Բազարում ստեղծուել էր երաժշտական-թատերական եւ գրական եռուզեռ մի շրջան, որի պատիւը պատկանում էր ամենից առաջ նոյն քաղաքի առաջնորդ Վրթանէս Պտուրեանցին եւ Խանբէկեան ու Նալբանդեան ընտանիքներին: Կարա-Մուրզան ապրելով այսպիսի մի շրջանակում, չէր կարող անշուշտ անտարբեր մնալ, մանաւանդ որ երաժշտութեան մէջ մեծ շնորհք էր ցոյց տալիս: «Նրա երաժշտութիւն սիրելուն աւելի նպաստեց, մանուկ հասակից, նրա մայրը, որը ունենալով դուրեկան ձայն, իր քաղցր երգերով փայփայում եւ զարգացնում էր մանուկ Կարա-Մուրզայի լսողութիւնը դեռ օրօրոցում, եւ նրան քնացնում էր իր մեղմ օրօրներով: Նրա մայրը ածում էր նաեւ կիթառի վրայ, որի նուագը շատ դուր էր գալիս Կարա-Մուրզային: Երբ նրա մայրը երգում կամ նուագում էր, Կարա-Մուրզան ինչ գործի մէջ էլ որ լինէր, թէ տանը մէջ, թէ դուրսը, մօտիկ ընկերների հետ խաղալիս, թողնում էր ամեն ինչ, ինդրում էր ամենքին լռել, իսկ ինքը ամբողջովին լսողութիւն դարձած, զմայլուած շնչարգել հրճուում էր մօր քաղցր եղանակներով: Դեռ չորս տարեկան հասակում, երբ նոցա մօտ հիւր է գալիս այն ժամանակուայ, Խրիմում յայտնի, հայ երաժիշտներից մէկը, նա երկար ժամանակ լռուած լսում է եղել նրա նուագը: Երբ նա լսում էր Խանբէկեանների դաշնամուրի ձայնը, վազում եւ կանգնում էր նոցա տան մօտ եւ հոգեզմայլ լսում էր մինչեւ այն ժամանակ, երբ օդի մէջ կորչում էին դաշնամուրի ձայնի վերջին հնչիւնները[1]:»

Կարա-Մուրզան իր նախնական կրթութիւնը ստանում է Պտուրեանցի բացած վարժարանում, ուր առանձնապէս ցոյց է տալիս ընդունակութիւն երաժշտութեան մէջ: Նրան յաջողւում է դեռ ութը տարեկան հասակում դաշնամուրի դասեր վերցրեկան հասակում դաշնամուրի դասեր վերցնել եւ շատ շուտով նա կարողանում է անսխալ կերպով նոտաներ կարդալ եւ գրի առնել:

Նկաւ ժամանակ երբ Քրիստաֆորի հայրը ըջջրէն մտածում էր իր զաւակը Վենետիկ ուղարկել: Սակայն դուր, նա շատ հեռու էր կանգնած հոգեւոր կոչումից: Այն ժամանակ հայրը նրան ուղարկում է Օդեսա հաշուեպահութիւն սովորելու: Շուտով վերադառնում է նա եւ սկսում հօրը հաշիւները պահել: Հայրը մեծ վնասների է ենթարկուում, զաւակը չի կարողանում հաշիւներ պահել, որովհետեւ նա երազում էր մի միայն երաժշտութիւն կատարելագործել եւ այդ ասպարէզին նուիրուել: Հայրը յաճախ յանդիմանում էր նրան ասելով՝ «Քեզանից մարդ չի դուրս գայ»:

Հեռանալով իր հօր գործերից նա սկսում է նորից երաժշտութեամբ պարապել: Շատ կարճ ժամանակամիջոցում նա հիմնովին ծանօթանում է երաժշտութեան

[1] Ցովհ. Կարապետեան, «Կարա-Մուրզա», 1904, Թիֆլիս, էջ 18—19:

A.R.A.R.@

թէորիային, ապա ձայնագրում է եւ յօրինում։ Կազմում է երգեցիկ խմբեր եւ ղեկավարում։ Դեռ մանուկ հասակից նա եղել է տարօրինակօրէն ֆանատիկոս. այս գիծը ժամանակի ընթացքում նրա մօտ աւելի ուժեղ կերպով է շեշտւում։ Ահա՛ մի դէպք ուր բացորոշ երեւան է գալիս նրա ֆանատիկոսութիւնը։

"Մի անգամ, երբ ցանկացել են խաղալ Արշակ II-րդի պատմական պիեսան, նա վերցրել է իր դերը (Արշակ II) եւ գնացել քաղաքից դուրս մի բլրի վրայ փորձելու։ Դերը սովորելիս այնքան տարւում է իր դերով, որ սկսում է խաղալ շարժուձեւերով, կարծէք բեմի վրայ լինէր։ Նրա այդ անօրինակ ձեւերից եւ ձայնից հետաքրքրուած, բլրի մօտ վրանաբնակ Թափառաշրջիկ բոշաները տեսնելով նրան, մօտենում են եւ ապշած դիտում. թէ արդեօք ինչ է անում այդ մենակ մարդը, քաղաքից դուրս, բլրի վրայ, ինքն իրան խօսելով եւ երբ հասնում է դերի այնտեղը, որտեղ պէտք էր ձեւացնել Արշակ II-ի խելագարութեան տեսարանը, նա այնքան բնական է կատարում, մոռացած իր շրջակայ դիտողներին, որ բոշաները վախեցած նրա շարժուձեւերից՝ փախչում են նրանից, կարծելով թէ այդ մարդը կամ խելագարուած է կամ թէ սատանաներով բռնուած[1]։"

Սակայն ինքնաշխատութեամբ չէր կարելի երաժշտական խոշոր պատրաստութիւն ձեռք բերել. նա մտադրւում է Պետերբուրգ անցնել կատարելագործուելու, բայց մի կողմից աչքերի հիւանդութիւնը (վաղ ժամանակից Քրիստաֆորը աչքերի ցաւից տառապում էր) եւ միւս կողմից նիւթական միջոցների չգոյութեան պատճառով նա ժամանակաւորապէս յետ է կանգնում այդ մտադրութիւնից։ Շուտով սկսում է երաժշտութեան դասեր տալ, միաժամանակ ինքն էլ դասեր վերցնելով այդ ժամանակի ծանօթ հայ եւ օտար երաժշտագէտներից։ Նրա մէջ ծագում է մի նոր գաղափար, Թէոդոսիա անցնել Ինստիտուտը մտնելու համար, սակայն սլաւոնական լեզուին լաւ ծանօթ չլինելուն պատճառով չի կարողանում յաջող քննութիւն տալ եւ ստիպուած վերադառնում է հայրենի քաղաք։ Այստեղ վերսկսում է դարձեալ խմբեր կազմել եւ համերգներ տալ։

Սակայն նրա համերգները չսահմանափակուեցին միայն իր հայրենի քաղաքում. այդ քիչ էր. Կարա-Մուրզայի նպատակն էր քառաձայն երգեցողութիւնը տարածել ամեն տեղ, ուր հայութիւն կար, ուր հայ մարդու սիրտն էր բաբախում։ Եւ նա 1882 թուին մեկնում է Կովկաս։ Մինչեւ Թիֆլիս հասնելը, նա ճանապարհին հանդիպում է մի շարք անձնաւորութիւնների, որոնք խորհուրդ են տալիս նրան հեռու մնալ քառաձայն երգեցողութիւն տարածելու գաղափարից։ Սակայն այդ խօսքերը երբեք ազդեցութիւն չեն թողնում նրա վրայ։ "Սոխում՝ քաղաքում՝, իմանալով իմ՝ նպատակը, ասում էին ինձ, որ դա անիրագործելի է, ցաւում էին ինձ վրայ եւ առաջարկում՝ մնալ Սուխումում՝, զինուորական երաժշտական խմբի կառավարչի պաշտօնով։" Մի ուրիշ նամակում գրում է. "Ծանօթանալով մի քահանայի հետ, նա առաջինների նման իմ՝ կարծիքին հակառակ էր. մանաւանդ եկեղեցական երգերի մասին, որ քառաձայնը անկարելի էր համարում՝ եւ կրօնական տեսակէտից սրբապղծութիւն ու հայկական ձայնանիշները եւրոպականից նա բարձր էր դասում՝։"

Ճանապարհին հանդիպելով ծաղրի եւ յանդիմանութեան, վերջապէս նա հասնում է Թիֆլիս եւ առաջին իսկ առթիւ ներկայանում "Մշակ"-ի խմբագիր, այդ ժամանակ մեծ անուն ունեցող Գրիգոր Արծրունուն։ Կարա-Մուրզան մեծ քաջալերանք է ստանում խմբագրից եւ իսկապէս որ Արծրունին մեծ աջակցութիւն է ցոյց

[1] Յովհ. Կարապետեան, "Կարա-Մուրզա", էջ 21—22։

տալիս երաժշտագէտին։ Նա ծանօթանում է նաեւ զրագէտ ծերենցի հետ։ Երկար ժամանակ Կարա-Մուրզային չէ յաջողւում խումբ կազմել, ոչ ոք չէ ներկայանում. նա մասնաւոր դասերով մի կերպ հազիւ է կարողանում իր աշակերտը ճարել։ Կարա-Մուրզան մեծ աջակցութիւն է գտնում նաեւ բանաստեղծ Գամառ-Քաթիպայից եւ վիպասան Ռաֆֆուց։ Թիֆլիս տեղափոխուելուց երեք տարի յետոյ միայն, այն է 1885 թուին յաջողւում է նրան խումբ կազմել։ Նրա առաջին համերգը Թիֆլիսում (1885 թ., մարտի 15ին) մեծ տպաւորութիւն է թողնում. Կարա-Մուրզան ովացիայի է ենթարկւում։ Երբ մի կողմից հայ լրագրութիւնը, ի գլուխ ունենալով «Մշակ»-ը թեւ ու թիկունք է հանդիսանում երաժշտագէտին, միւս կողմից սառոր կերպով հալածում են նրան։

Թիֆլիսից յետոյ նա ճանապարհ է ընկնում Բագու։ Յաջորդ տարին այնտեղ տալիս է մի համերգ, որ նոյնպէս մեծ աղմուկ է հանում։ Քաջալերուած այս յաջողութիւնից նա տալիս է մի շարք համերգներ, հետզհետէ աւելի խրախուսուելով հասարակութիւնից։ 1887 թուին անցնում է Պոլիս, որտեղ դեռեւս գաղափար չունէին քառաձայն երգեցողութեան մասին։ Այնտեղ նա ծանօթանում է Հայոց հայրիկի հետ, որը ասում է «ձեր երգերն ալ մեր քարոզի գործը կը տեսնեն, ժողովրդեան սիրտը կը կակղացնեն. ներդաշնակ երգը ամէնի վրայ աւելի լաւ կ'ազդի»։ Յորէն Նար-Բէյի խօսքերը. «երգեցէք որքան կարող էք կեանք, կենդանութիւն. լաւ գործ է. կատարելագործուած եղանակներ մտցրէք ազգի մէջ»։ Գամառ Քաթիպան ասում է. «քանի երիտասարդ էք, աշխատեցէք միշտ կատաղի երաժշտութիւն գրել. ողբը կը զրէք եւ ծերութեան հասակում»։— «Լռեց ամպերը», «Մայր Արաքսին» — լալկան եղանակներ են. լաւ է՝ «Բաւ է եղբարք վիզ ճկել» — երգի եղանակը։ Ալիշան. «Գեղարուեստական հեղինակութիւնները եթէ աշխոյժ չըլինեն, կը կորսնցնեն իրենց կենսունակութիւնը»։

Պոլսից վերադառնալով Բագու, Կարա-Մուրզան եկեղեցում երգել է տալիս քառաձայն պատարագը, բայց մի անգամ միայն։ Մեսրոբ եպիսկոպոս առաջնորդի կարգադրութեամբ եւ հրամանով վերջնականապէս արգիլւում է։

Նոյն այդ ժամանակ նա հրաւէր է ստանում Նոր-Նախիջեւանից, բայց մերժում է, որովհետեւ մտածում էր առանձնանալ եւ «Շուշան» օպերան գրել։ Այստեղ իսկոյն ասեմ որ այդ օպերան չվերջացաւ եւ միայն «Հէյ բէգ» նախերգանքը բեմ դուրս բերուեց։ Նա շատ էր մտածում Բագուում բաց անել երաժշտական մի դպրոց, բայց չյաջողուեց։ Այս անյաջողութիւնից յետոյ նա անցնում է Աստրախան. եւ ի՞նչ պայմաններում. չունենալով ճանապարհածախս, նա ծախում է իր տանը ամբողջ կահկարասիքը։ Աստրախանում յաջողւում է նրան երգեցիկ խմբեր կազմել եւ եկեղեցում երգել։ Ատրպետը «Աղբիւր» թերթում հետեւեալն է գրում. «կարծես դեռ այս ժամին ղժղժում է ուղեղումս, ծանուում է Կարա-Մուրզայի «ինչ անենք»-ի եղանակը։ Դեռ չեմ հետացել ականջիս տակից Գամառ-Քաթիպայի այս խօսքերն, այդ եղանակը լսելուց յետոյ, որ թոթովում էր մանկական ոգեւորութեամբ, արտասուակալ աչքերով. «Յաչատուր, հոգիս ցնցեցիր, ինձ երկին բարձրացրիր. այդ ինչպէս ընկմեցար իմ հոգուս խորքերը եւ այնտեղից առոգանուած այդ բառերը այս նոտերով կենդանացրիր։ Դեռ այս բոպէիս աչքիս առաջից չէ հեռանում ծերունի բանաստեղծի ոգեղմայլ դէմքը, երբ երգեցիկ խումբը նրա մարգարէացած հանգերն ի կրկնում — «հայը կստիպէ վեհ պատրիարքին»... եւ Կարա-Մուրզան ոգեւորուած, դաշնամուրը նուագելիս, դիմագծերով, աչքով՝

ARAR@

ունքով, մորուքով, ուսերով ու թեւերով նշաններ էր տալիս երգեցիկ խմբին եւ կենդանացնում, ցնցում կենդանի հասարակութեան։ Դեռ կարծում եմ նոր եմ վերադարձել Թաղեւեի թատրոնից. սենեակումս կէս գիշերի խոր լռութիւնն է թագաւորում եւ անդադար բաղխում են ականջիս Կարա-Մուրզայի ձայնագրած, ծովակի մետաղային ձայնով երգած «Ազատն Աստուած», իր մեղմ, քնքոյշ եւ ահեղ ու խրոխտ ելեւէջներով, «դու զմով խնդրես»ի մելամաղձոտ սօլօ եւ խմբական եղանակներով եւ Կարա-Մուրզան բեմի առաջ նստած՝ օրկէստր կառավարելիս։ Այս քաղցր անուրջս անվերջ շարունակւում է, անուշ եղանակները, սոխակային դայլայլիկներով ցնցում են հոգիս եւ հրճուալի տեսարաններն իրար յաջորդում. այն անկիւնից Նալբանդեանի եւ Պէշիկթաշլեանի զուարթ դէմքերը նկատելով լցուում է բերկրութեամբ»։

Բագուից եւ Թիֆլիսից յետոյ Կարա-Մուրզան սկսում է պտտել Կովկասի զանազան քաղաքներում, ամեն տեղ գտնելով մեծ յաջողութիւն։ 1891 թուին Վիեննայում եւ յետոյ Զիկագոյում բացուելու էր երաժշտական-թատերական համաշխարհային ցուցահանդէս։ Կարա-Մուրզան ցանկանում է հայկական խմբով մասնակցել այդ ցուցահանդէսներին, սակայն փողի չգոյութեան պատճառով՝ այս ծրագիրն էլ ջուր է ընկնում։ 1892 թուին, Կարա-Մուրզան Գէորգեան Ճեմարանի տեսուչ Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանից հրաւէր է ստանում Էջմիածին մեկնելու։ Կարա-Մուրզան թողած իր աշխատանքները՝ շտապում է Էջմիածին։ «Աւելորդ է ասել, թէ որքան ուրախացրեց եւ ոգեւորեց ինձ այդ առաջարկութիւնը։ Մի տասնեակ Խրիմում եւ ահաւասիկ եւ տասը տարի Կովկասում անընդհատ երազելուց յետոյ, վերջապէս շնորհիւ ձեր համակրանաց, արժանանում եմ հասնել նպատակիս, ծառայել ազգին քառիս բուն նշանակութեամբ։ Այդ հրաւէրով ես արդէն բարոյապէս անսահման վարձատրուած եմ համարում։»

Էջմիածին հասնելուց յետոյ Կարա-Մուրզան մի նամակի մէջ գրում է իր տպաւորութիւնները ճանապարհորդութեան մասին։

«Այս ճանապարհորդութիւնը դիւթիչ էր, իբրեւ բնութիւն ինքն ըստ ինքեան ոչինչ, բայց քանի մօտենում էի Վաղարշապատին, այնքան աւելի կենդանանում էր այս սրբավայրը երեւակայութեանս մէջ... Ահա երեւում են հեռուից նախ պահակների բնակարանը, յետոյ գլխարկի նման յայտնի չինար ծառը, ապա Հռիփսիմէ, Շողակաթ վանքերը, Մայր տաճարը, Ճեմարանը... Մտնում եմ Վաղարշապատ մի առանձին պատկառանքով... հասնելով Էջմիածնի վանքի դուռը, իջայ կառքից, անցնելով ոտով գնացի դէպի ներս, բակը։ Սանդուխքներից իջայ եւ ձախ որ գնացի՝ հսկայ, վսեմ եւ սուրբ տաճարը անմիջապէս գիմացս յայտնուեց։ Մի լոպէ անշարժ մնացի, տպաւորութիւնը անբացատրելի էր։

Առաւօտեան զանգակների ձայնից զարթեցի։ Տարօրինակ թուաց այստեղի զանգակների ձայնը եւ թէ եղանակը։ Ես ինքս լաւ զանգահարում էի. Խրիմ միշտ հաւաքւում էին ինձ լսելու, ինչպէս չորս զանգակով զանազան հանգերով եղանակներ էի նուագում։ Բայց այն մոռացայ, այստեղ այս երկու զանգակների կէնտկէնտ հարուածներն էին լաւ, այստեղ այս էր դուրեկան։ Սա Էջմիածինն էր... Տեղեցս վեր կացայ շատ զուարթ, կարծես նոր աշխարհ եկած լինէի. սիրտս հրճուում էր, սրանից էլ մեծ երջանկութիւն չէր կարող լինել... սիւն, պատ, քար, ծառ, նեղ անցք, սանդուխք, բոլորն էլ սրբավայր էին թւում՝ ծառայ, անցորդ, շինական մուրացկան — ով երեւաց, բոլոր այստեղի մարդիկն էլ սուրբեր էին երեւում։ Դատողութեամբ գիտէի, որ այդպէս չէ, բայց ասում եմ, որ թւում, երեւում էին...։ Շատ էի գրաւել Էջ-

digitised by

միածնով. չէի ուզում, որ այստեղ լինեն մեղաւորներ, ապականուած, կեղտոտ, ստոր հոգի մարդիկ... Ասում էի ինքս ինձ՝ այստեղ եկողներն էլ պէտք է պատրաստուած գան. կենսական հաշիւներ, կուիները վերջացնեն — մաքրեն, թշնամիների հետ հաշտուին ու այնպէս համարձակուին մտնել այս ի սկզբանէ սուրբ տեղը... կամ՝ չպէտք է գալ, չպէտք է պղծել այս սրբութիւնը... իսկ ես մտածում էի — կարող եմ արդեօք...»:

Հասնելով Էջմիածին Կարա-Մուրզան իսկոյն դասերի է սկսում: Նրան յաջողւում է առաջին իսկ առիթով մի մեծ խումբ կազմել: Ի՞նչ էր նրա գլխաւոր նպատակը Էջմիածնում: Ահա թէ ինչ է գրում Յովհ. Կարապետեանը.

«. Պատրաստել ճեմարանում դպրոցների համար հմուտ ձայնագրագէտ ուսուցիչներ, որոնք միեւնոյն ժամանակ կարողանային դասարաններում գոնէ երկու ձայնով երգ անցնել:

Բ. Պատրաստել խմբապետներ, որոնք կարողանային կազմել խմբեր եւ արդէն ներդաշնակած քառաձայն պատարագի արարողութիւնը եւ այլ երգեր երգելու համար, նպատակ ունենալով, պատրաստելու ժամանակ, աւելի ուշք դարձնել եկեղեցական երգեցողութեան մասնաւորապէս շարականները դիւրին եւ լաւ կերպով երգելու:

Գ. Պարապել ընդունակ աշակերտների հետ առանձին եւ ուղարկել նրանց շարունակելու եւ կատարելագործուելու:

Դ. Կազմել ճեմարանում երկու խումբ գործիքների վրայ ածելու՝ մէկը լսարաններից, իսկ միւսը դասարաններից: Բացի դրանից, տալ հայկական նոտաներով ձեռնարկներ, դասագրքեր եւայլն:

Եւ Էջմիածին որ գաղափար չունէր քառաձայնի մասին, շնորհիւ Կարա-Մուրզայի նա ծանօթանում է բազմաձայն երգասացութեան հետ: Մայր տաճարում, նրա խորհրդաւոր կամարների տակ ներդաշնակօրէն հնչում է քառաձայնը՝ թողնելով խոր եւ դիւթական տպաւորութիւն: «Օրուայ, ժամանակի սքանչելի նորութիւն եղաւ, երբ առաջին անգամ մայր տաճարի կամարների տակ, հնչեց քառաձայն երգը սուրբ պատարագին: Լսեցէք, լսեցէք — այդ էր հարցմունքը բերանից բերան: Հոչակն արդէն Երեւանում էր, եւ յաջորդ անգամին եւայնուհետեւ դեռ շատ անգամ Երեւան այցելուներ էր անում Էջմիածնին՝ պատարագի քառաձայն դպրութիւնը լսելու: Տաճարի գմբէթները կարծես վերանում էին եւ յափշտակուած ունկնդրողի ոգին հիացման թեւերի վրայ սլանում էր, սլանում էր բարձր բարձր՝ երբ քառաձայնը հնչում էր եւ երգի նուագման հետ լուռ ընդարմացած մնում էր աղօթաւորը[1]:»

Յոյն ամրան նա համերգներ է տալիս Երեւանում, Աղեքսանդրապոլում եւ Իգդիրում:

Խրիմեանը երբ Էջմիածին է հասնում կաթողիկոս ձեռնադրուելու, Կարա-Մուրզան որ Պոլսից արդէն ծանօթ էր հայրիկին տեսնում է նրա հետ եւ այսպէս գրում իր եղբօրը «Հայրիկը ինձ լաւ ընդունեց, եւ երկու անգամ շնորհակալութիւն յայտնեց պատարագի արարողութիւնը քառաձայն լսելուց յետոյ: Այսօր ունեցայ տեսակցութիւն, խօսեցինք մի ժամից աւելի, նա յիշեց ինձ Պոլսից, լրագիրներից եւ խմբովին ուղարկուած հեռագիրներից:»

Տարաբախտաբար Կարա-Մուրզան երկար ժամանակ չէ կարողանում Էջմիածնում մնալ: Յեռադէմ հոգեւորականութիւնը եւ մի քանի մութ անձնաւորութիւններ սկսում են ամենասուր կերպով հալածել արուեստագէտին, որովհետեւ նա կաթոլիկ էր, «Աստուածը մէկ, ծայնն էլ մէկ պէտք է լինի». «Քառաձայնը Աստծուն հաճելի չէ» ասացին: Եւ այս էր նրանց ամբողջ «պատճառաբանութիւնը: Եւ մի դժբախտ օր, 1893 թուին նա հեռանում է Էջմիածնից, որի

[1] «Արեւելք», 1902, թ. 4955:

A.R.A.R.@

հետ այնքան յոյսեր էր կապել, բայց որտեղ իր յոյսերը հիմնայատակ խորտակուեցին։

«Ափսոս իմ ծրագիր, ափսոս իմ նպատակ, մտադրութիւն... Նրանք որտեղ պիտի իրագործուին — յայտնի չէ։ Այս բոպէիս զոնէ խորտակուած նաւակի նման ծփում են կատաղի ալիքների մէջ, ո՞ր ափին պիտի մօտենամ՝ արդեօք...

Հազիւ սկսել էինք կանոնաւոր քառաձայն երգեցողութեամբ պարապել Ճեմարանում, հէնց երկրորդ տարուայ սկզբում ինձ հեռացրին եւ էլի մտցրին հին արեւելեան ոնգային ճնշող միաձայն երգեցողութիւնը եւ աննպատակայարմար դասերը... դրա համար ասում եմ՝ արդեօք ո՞րտեղ կիրագործուի իմ ծրագիրը... մտադիր եմ ի հարկէ այս տարի գնալ զանազան տեղեր եւ թափառել ինչպէս բախտը կը բերէ»։

Ես տեսակցութիւն ունեցայ Գէորգեան Ճեմարանի նախկին տեսչի (Արիստ. եպիսկ. Սեդրակեան) օգնական Յովհ. Սաղաթէլեանի հետ, որը Կարա-Մուրզայի արձակման մասին հետեւեալը յայտարարեց։

«Մի օր Խրիմեանը վեհարան կանչեց ինձ. իր սովորութեանը համաձայն ծալապատիկ նստել էր արախչին գլխին դրած։ Սովորական բարեւից յետոյ հարցրեց. — Գ. Սաղաթէլեան, այդ ի՞նչ երաժշտութիւն էք մտցրել Ճեմարանում։ — Վեհափառ, ասացի, ի՞նչպէս թէ ինչ երաժշտութիւն։ Խրիմեանի մօտ որ նստել էր Աղուանեան եպիսկոպոսը իսկոյն հեղնանքով պատասխանեց. — Այդ երաժշտութիւնը նրա համար է, որ գիւղացի տղաները իրենց երկրագործական գործիքները ծախեն եւ երաժշտական գործիքներ գնեն։ Երբ հայրիկը այդ խօսքերը լսեց, հրամայեց ինձ որ Կարա-Մուրզային Ճեմարանից արձակեմ[1]»։

Յովհ. Սաղաթէլեանի խօսքերը հաստատում է նաեւ մէկ ուրիշը։

«Ղեկավար սրբազաններից մին[1], մի օր հեղնեց՝ մատնանիշ անելով երաժշտական այն գործիքի վրայ — տեղապահութեան նորմուծութիւններից մին՝ մի ռոյալ — որի դաշնակցութեամբ այնքան ոգեպարար երգեր էր ուսուցանում Կարա-Մուրզան իր ճեմարանականներին։ Նա մի օր, հեղնեց, ասում եմ, գործին եւ գործաւորը՝ սրբանելով իր խմաստութեամբ։ Սա, այս գործիքը, այն բանին է ծառայում, որ երբ աշակերտները Ճեմարան աւարտեն, յետ դառնան տեղերնին, ծախեն իրենց հայրենի գութանն ու արօրը եւ այսպիսի գործիքներ[2] գնեն։ Այդպէս հեղնուած արձակուեց Կարա-Մուրզան։ Արձակուեց նա անապահով, անապաւէն, անապաստան, բայց միայն իր տաղանդին ապաւինած[3]»։

Այնուհետեւ նա մեր է գալիս Կովկասի զանազան քաղաքներ, անգամ յետ ընկած գիւղեր եւ տալիս համերգներ։ Նոյն իսկ վրացախօս վայրերում նրան յաջողւում է քառաձայն խմբեր կազմել։ Թիֆլիս եւ Բագու դարձեալ բախտ են ունենում լսել նրա խմբերին։ Սակայն նրան հալածում են նաեւ Էջմիածնից դուրս։ Այդ ժամանակաշրջանում մանաւանդ նա գտնուել է նիւթական շատ անպատաստ պայմանների մէջ։ Եղել են օրեր, երբ նա հնացել է քաղցած, բայց չնայած դրան, նա անխոնջ կերպով առաջ է տարել իր սիրած ու փայփայած գործը՝ կանգ չառնելով ոչ մէկ խոչընդոտի առաջ։ 1894 թուին Երեւանի Հայոց դպրոցների տեսուչ Մեսրոբ քահանայ Գեոնջեանցը իր թեմի դպրոցների վարչութիւններին մի նամակ է գրում՝ տրգիռելով քառաձայն երգեցողութիւնը։ Բայց այս էլ արդելք չի դառնում որ Կարա-Մուրզան յետ կանգնի իր գործից։

[1] Խրիմեանը որ մի ժամանակ քաղաքում էր Կարա-Մուրզային, Էջմիածնից նրան արձակել է տալիս, սրովհետեւ մի քանի յետադէմ մարդիկ, երենց գլուխ ունենալով Աղուանեան եպիսկոպոսը՝ գրգռում են հայրիկը երաժշտի դէմ։

[1] Խօսքը Աղուանեան եպիսկոպոսի մասին է։

[2] Երաժշտական գործիք ուզում է ակնարկել։

[3] «Կարա-Մուրզա Էջմիածնի մէջ», «Արեւելք», 1902, թ. 4955։

digitised by

1901 թուից նա հաստատուում է Թիֆլիսում եւ առեւտրական դպրոցում աւանդում է երգեցողութեան դասեր։ Միաժամանակ զբաղուելով մասնաւոր դասերով։

Մի տարի անց, 1902 թուի մարտի 27-ին, կարճատեւ հիւանդութիւնից վերջ վախճանուում է նա, իր ամբողջ կեանքում չարչարուելուց եւ տառապելուց յետոյ։ 17 տարի շարունակ նա համերգներ է կազմակերպել։ «Այդ ժամանակամիջոցում նա կազմել է 47 քաղաքներում 90 խումբ, տուել է 248 համերգ, պատրաստել է եկեղեցական խմբեր. նրա ամեն մի համերգին մասնակցել են 40-ից սկսած մինչեւ 150 երկսեռ անձինք։ Նրա բոլոր խմբական երգեցողութիւններին մասնակցել են 6000 մարդ արական եւ իգական սեռից։ Նա գրել եւ մշակել է 320 երգեր, յօրինել է 67 ինքնուրոյն հեղինակութիւններ»։ Նրա երաժշտական գործունէութեան եւ համերգների մասին ոչ թէ միայն հայ թերթեր եւ ամսագրերն են արտայայտուել, ապա նոյնինկ վրացական եւ ռուսական մամուլը զբաղուել է նրա համերգներով. «Казбекъ» թերթը 1896-ին (թ. 70) այսպէս է գրում «Պէտք է խոստովանել որ առանձին կասկածանքով մոտենք թատրոն, որտեղ ապասում էինք լսել Եւրոպացու հոգուն քիչ բան խոստացող, արեւելեան միակերպ մի երաժշտութիւն, բայց որքան մեծ եղաւ մեր զարմանքը, երբ մեր առաջ տեսանք 70 հոգի՝ երեխաներից, պատանիներից, կանանցից եւ տղամարդկանցից կազմած, խիստ ջոկողութեամբ, լաւ պատրաստուած, նուրբ ձայներով մի կանոնաւոր խումբ։ Համերգը տրուեց խրոխտ եւ երաժշտական forte եւ piano-ն զարմացրին մեզ իրանց հնչումով, նրբութեամբ եւ բազմաթիւ ունկնդիրներին մեծ հրճուանք պատճառեցին բոլոր երգերը եւ ամեն №№ մի քանի անգամ կրկնուեցին։»

«Հայկական երաժշտութիւնը յանձին Քրիստ. Կարա-Մուրզայի կորցրեց իր անձնուէր գործչին։ Մարտի 30-ին համակրողների խուռն բազմութիւն դէպի յաւիտենական հանգիստ էր յուղարկաւորում յայտնի երաժշտագէտ եւ հայոց երգերի եռանդուն ժողովրդականացնող Կարա-Մուրզային։ Պսակներով զարդարուած նրա դագաղը, կարծես օրօրուելով երաժշտական հրաժեշտի թախծայոյզ ալիքների մէջ, բազմաթիւ բաց գլուխների մակերեւոյթից բարձր, հանդարտ ընթանում էր դէպի կաթոլիկաց Պօղոս-Պետրոս եկեղեցին եւ այնտեղից Կուկիայի կաթոլիկաց գերեզմանատունը։ Շատ սրտաշարժ խօսքեր ասուեցին հանգուցեալի դագաղի վրայ։ Այդ ճշգրիտ դրուատուածներից պարզ էր Կարա-Մուրզայի կատարած մեծ դերը մեր կեանքում։

Մենք յաճախ կրկնել ենք, որ հայը ընդհանրապէս զուրկ է կազմակերպական ընդունակութիւնից. սակայն Կարա-Մուրզան այդ կողմից մի փառաւոր բացառութիւն էր կազմում. նա ունէր մի զարմանալի տաղանդ՝ կարճ միջոցում երգեցիկ խումբ կազմակերպելու նոյն իսկ հայութիւնից օտարացած վայրերում։ Իր անսպառ եռանդի մի մասը, իր ջերմ ոգեւորութիւնը եւ անձնուէր սէրը դէպի հայկական երգերը նա հաղորդում էր իր շուրջը. նա իր անօրինակ աշխոյժով ցնցում էր դանդաղաշարժ եւ անտարբեր հայերին եւ հայուհիներին։ Իր կազմակերպական տաղանդի, անհուն եռանդի եւ ոգեւորութեան շնորհիւ, Կարա-Մուրզան, սկսած 1885 թուականից, բազմաթիւ քաղաքներում տուել է հայոց երգերից 250 համերգ։ Այն ինչ որ մինչեւ այդ զարմանալի գործիչը աներեւակայելի էր համարում մեզանում, նրանից յետոյ դառաւ իրագործելի նոյն իսկ աւելի միջակ ոյժերի համար։ Գործը սկսուած էր եւ ուղիղ ճանապարհի վրայ դրուած, մնում էր միայն ընդօրինակել եւ շարունակել։ Այդպէս ահա, Կարա-Մուրզան հայոց խմբական երգեցողութեան գործում առաջին ճանապարհ բացողն էր, առաջին ոահվիրան։ Կարող են նրանից տե-

սականապէս աւելի հմուտ երաժշտագէտներ լինել, սակայն նրա մեծութիւնը կայանում է մեր մասայի մէջ հնչական ներդաշնակութեան գաղափարը եւ ժողովրդական երգերի սերը արծարծելու եւ տարածելու մէջ[1]»:

Կարա-Մուրզա, նա մի մարդ էր, որ երբեք չյոգնեց, չյուսահատուեց, նա մի երաժիշտ էր, որ քանդեց բոլոր պատնէշներ եւ բազմաձայն երգեցողութիւն մտցրեց: Քաղքի մէջ ապրեց նա, զրկանքներից հիւծուեց, մաշուեց, բայց երբեք յետ չկանգնեց իր վսեմ գաղափարը տարածելուց:

Եւ նա մեռաւ յաղթանակի մէջ:

(Շարունակելի) ՌՈՒԲԷՆ ԹԷՐԼԷՄԷԶԵԱՆ

ՑՈՒՑԱԿ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ

ՀԱՅԵՐԷՆ ԼՐԱԳԻՐՆԵՐՈՒ

(Շարունակութիւն)

1868—1914 «Արարատ», Վաղարշապատ, Հրտրկ. Հոգ. Իշխ. Էջմիածնայ: [97
» «Էրիզա», կ. Պոլիս, խմբ.-ատն. Խաչիկ Թ. Թէրզեան: [98
» —1869 «Իրաւունք», Իզմիր, խմբ.-տէր. Սարգիս Միրզա: [99
» «Օրագիր», կ. Պոլիս: [100
1869 «Արարատ», կ. Պոլիս, խմբ. Մ. Մատթէոս Այվատեան: [101
» —1873 «Եփրատ», կ. Պոլիս, խմբ. Սիմոն Հ. Մ. Գելէկեան, Տն. Ս. Մ. Գալանճեան: [102
» «Ձայն Սեբաստացւոց», Սեբաստիա: [103
» —1883 «Մամուլ», կ. Պոլիս, խմբ. Գէորգ Ց. Այվազեան: [104
» «Օրագիր», կ. Պոլիս, պատ.-ատն. Օգոստն Խոճասարեան: [105
1870—1875 «Դիտակ», կ. Պոլիս, Տէր եւ Տն. Խ. Հ. Սիմոն Իւթիւճեան: [106
» —1871 «Երկրագունդ», կ. Պոլիս, Հրտրկ. Նուպար-Շահնազար վարժարանի: [107
» —1896 «Հայրենիք», կ. Պոլիս, խմբ.-Տէր. Մ. Ց. Մելիքեան: 1891—1896 Տէր եւ Տն. Յովհ. Շահնազար, խմբ. Արփիար Արփիարեան (1891—1893): [108
1870 «Հորիզոն», կ. Պոլիս, Տէր եւ խմբ. Ս. Գ. Արապեան: [109
» «Մամուլի Ձագը», Սեբաստիա: [110
» «Սեւ Հողեր», Սեբաստիա: [111
» «Փող Առաւօտեան», կ. Պոլիս, խմբ. Ց. Ց. Պարոնեան: [112
» ? «Բաղ», Սեբաստիա: [113
» ? «Մոդա եւ Մուզիկ», կ. Պոլիս: [114
1871—1909 «Արեւելեան Մամուլ», Իզմիր, Տէր եւ խմբ. Մատթէոս Մամուրեան: [115
1872-1875 «Ասիա», կ. Պոլիս, խմբ.-ատն. Յովակիմ Գ. Բէքսեան, Յակոբ Խանճեան: [116
» —1914 «Աւետաբեր» (տղայոց համար) կ. Պոլիս, Հրտրկ. Ամեր. Միս. Ընկ.: [117
» —1874 «Դաստիարակ», Թէոդոսիա: [118
» —1914 «Մշակ», Թիֆլիս, խմբ.-Հիմն. Գրիգոր Արծրունի, — Հ. Առաքելեան: [119
» —1876 «Փարոս», Մոսկուա, խմբ. Զարմայր Մսերեանց: [120
» «Փող Արեւելեան», կ. Պոլիս, Տէր եւ Տն. Կարապետ Մին. Երզնկանեան, — Գ. Մ. Շիշմանեան: [121
» «Փունջ», կ. Պոլիս: [122
1873 «Արեւելեան փող», կ. Պոլիս, խմբ.-ատն. Բարթող Սուր: [123
1874—1876 «Գպրոց», Վաղարշապատ, խմբ. Վահան Վարդապետ Բաստամեան: [124
» —1877 «Թատրոն», կ. Պոլիս, խմբ.-ատն. Ց. Ց. Պարոնեան: [125
» —1885 «Լոյս», կ. Պոլիս, խմբ. Համայեակ Ծ. Վ. Դիմաքսեան. — Ց. Ց. Պարոնեան, — Մ. Գափամաճեան: [126
» «Կիսամեայ»... [127
» —1875 «Մօտա», կ. Պոլիս, խմբ. Կարապետ Փանոսեան: [128
» —79 «Նոր Դար», կ. Պոլիս: [129
» «Պրուսա», Պրուսա: [130
1875—1880 «Լրագիր», կ. Պոլիս, խմբ.-ատն. Թիւլպէնճեան: [131
» «Խէյալ», կ. Պոլիս, խմբ. Ց. Թընկըրեան: [132
» —1886 «Միմոս», կ. Պոլիս, խմբ. Անտոն Ց. Սագաեան: [133
1876 «Արարատ», կ. Պոլիս, խմբ. Մ. Մատթէոս Այվատեան: [134
» —1878 «Թատրոն» (բարեկամ մանկանց), կ. Պոլիս, խմբ. Ց. Ց. Պարոնեան: [135
» —1877 «Մամուլ» կ. Պոլիս, խմբ. Գէորգ Ց. Այվազեան: [136
» «Նորագիր», կ. Պոլիս: [137
» «Շառիվարի», կ. Պոլիս, խմբ. Յակոբ Մ. Հաճիեան: [138

(Շարունակելի) Հ. Ռ. Ք.

[1] Լ. Ս. Կարա-Մուրզա, «Մուրճ», 1902 թ., էջ 181, 182:

digitised by